# ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արտաշատի հնագիտական արշավախումբը վերջին տարիներին (2011–2013 թթ.) շարունակել է պեղումները քաղաքատեղիի հյուսիսարևմտյան տեղամասում, Արաքսի ձախ ափին, 70 մ հեռավորությամբ (աղ. I, 1): Նախորդ տարիներին բացված գանձարանի և հասարակական բաղնիքի հարավային կողմում, արևմուտք-արևելք ամբողջ երկայնքով պեղումներով բացված մ. թ. I դարին պատկանող լայն զանգվածեղ որմի (լայն. 155–170 սմ) ու դրանից հարավ մ. թ. ա. II–I դարերի շերտի ութ սենյակների հյուսիսային հատվածի որմերի ստորին շարքի վեմերն են միայն պահպանվել: Արևմտյան կողմից առաջին սենյակը խորացվել է 60 սմ: Այստեղ գանձարանին զուգահեռ պատի բարձրությունը 4,50 մ է: Հայտնաբերվել են կղմինդրների և մ. թ. ա. II–I դդ. խեցեղենի բեկորներ: 2-րդ սենյակում, որն ավելի մեծ է (լայն 9,50 մ, պատերի լայնությունը 1,70 մ) հայտնաբերվել է կրաքարե տորաձև երկու խարիսխ: Տորուսները (բարձր. 19 սմ) հենվել են քառանկյուն (53 x 57 սմ) սալաքարի վրա (բարձր. 24 սմ): Վերին մասում ունեն նեղ դարակներ (տր. 24սմ, աղ. III, 1):*

*Խարիսխները հյուսիսային լայն պատից հեռու են 3,70 մ: Դրանց հեռավորությունը կենտրոնից կենտրոն 3,30 սմ է, արևելյան պատից մինչև խարիսխը՝ 185 սմ, արևմտյան պատից՝ 460 սմ: 2004–2005 թթ. տաճարական հելլենիստական հարթակի դիմաց բացված միջնադարյան պատերի մեջ հայտնաբերվել էին հար և նման երկու այդօրինակ խարիսխներ: Այժմ պեղումներով պարզ է դառնում, թե որտեղից են դրանք բերվել: Հնարավոր է, որ սենյակը եռանավ սյունազարդ դահլիճ է: Սյունազարդ սրահի արևմտյան հատվածից գտնվել են բազմերանգ որմնանկարների, տարբեր հաստության կղմինդրների բեկորներ: Ի դեպ, դրանք կարմիր կավից, հանդիպում են առաջին անգամ: Գտնվել են նաև I դ. սկուտեղներ, պնակների բեկորներ: Բոլորն էլ կարմիր անգոբով պատած, խնամքով փայլեցված նմուշներ են: Մեծ սկուտեղի բեկորներից մեկի պսակի, իրանին միանալու մասում ներսից թուխ գոտի է արված, որը եզակի է այդ շրջանի նմանօրինակ հավաքածուներում: 2,50 սմ խորությունից գտնվել է ապակյա սրվակի բեկոր (II դ.): Հայտնաբերվել է կաղապարի մեջ կրաշաղախից կաղապարված կանելյուրներով փոքր կիսաբոլոր գլանի երկրորդ հատվածը (աղ. III, 4): 2009 թ. տաճարի հրապարակից հայտնաբերվել էին կրաշաղախից, կաղապարի մեջ ձուլված, շեղանկյուններով ու օվնաներով հարդարված*

*կիսաբոլոր մամ[1]: Վերնամասում ունի մետաղյա ձողի օգնությամբ պատին ագուցելու փոքր փոսիկ (բարձր. 23,35 սմ, տրամ. 14,4 սմ): Տարածքից՝ հողի լիցքից, ի հայտ է եկել նաև կրաքարե խարսխի փոքր բեկոր, որը դժվար է ասել, թե ինչ տիպի է: Վերը հիշված մանրամասները խորանների ճարտարապետական հարդարանքի մասեր են եղել: Բազմիցս փոքր խարիսխներ են հայտնաբերվել Բակտրիայից, Այ-Խանումում[2], Ուզբեկստանից, Այրտամում, Քյուլ Թեփեում, Թերմեսում[3] և այլ հնավայրերում:*

*4–8-րդ սենյակներից գտնվել են կրաքարե սպիտակ և մուգ կապտերանգ սմալտայով պատած մեծ քանակությամբ խճանկարի խորանարդիկներ, կիսաֆաբրիկատներ և հատակի խճանկարներով առանձին ոչ մեծ հատվածներ: Խճանկարները պատրաստվել են տեղում:*

*Հասարակական բաղնիքի հարավային հատվածում հարավարևելյան մասում 4 մ հեռավորությամբ բացվեց արևելք-արևմուտք առանցքով երկու սենյակներ (աղ. I, 2): Սենյակներից մեծը՝ արևմտյանը 52 քմ է, որտեղ սկավառակաձև աղյուսներով շարված է հիպոկաուստի 182 հենասյուն (պատի լայն. 90 սմ է): Երկրորդ հատակը թեև չի պահպանվել, սակայն, առանձին մեծ բեկորներով աղյուսներից մի քանիսը հաջողվել է ամբողջացնել: Չափերը նույնն են ինչ-որ հասարակական բաղնիքի երկրորդ հատակի աղյուսները (40 x 40 սմ): Երկրորդ սենյակն ավելի փոքր է (19 քմ): Ներառում է 42 հենասյուն: Ակներևաբար, այս բաղնիքը կառուցվել է մ. թ. II դ. առաջին քառորդին:*

*Երկու սենյակների կրակարանները հյուսիսային պատի մեջ են: Ուշագրավ է մեծ սենյակի հյուսիսային հատվածում բացված ջրամատակարարման կատարյալ համակարգը: Այն ուղղահայաց պատերով առվակ է՝ պատրաստված թրծած ուղղանկյուն աղյուսներով և տափակ սալերով: Առվակը հյուսիս-արևմուտք թեքվելով՝ մտնում է հասարակական բաղնիքի առվի հատակի տակ: Ուշագրավ է, որ առվի թեքությունը դեպի մեծ սենյակն է, 3 մ վրա թեքությունը 30 սմ է (աղ. I, 7): Նույն հատվածում տարբեր տրամաչափի խողովակները մեծ սենյակի պատից երեք շարք խողովակաշար դեպի հյուսիս հասարակական բաղնիքի առվի միջով անցնելով մեկտեղվում է կրաքարե 1–4 անցքով ջրբաժանին հետ ընթանում արևելք: Ջրատարի խողովակները իրար մեջ մտցնելուց բացի՝ կրաշաղախով ամրացվել են: Խողովակաշարի առանձին հատվածներում անցքեր են արվել և կափարիչ դրվել օդը դուրս թողնելու համար (աղ. II, 2): Այս հատվածի ջրբաժանը տարբերվում է մյուսներից: Այն 1–4 անցքերից բացի հարավային կող-*

---

[1] *Ժ. Խաչատրյան. Նորահայտ հեթանոսական տաճար Արտաշատ մայրաքաղաքում.– «Բանբեր Երևանի համալսարանի», Հայագիտություն, Երևան, 2010, 130, 1, էջ 30, աղ II, 11:*

[2] P. Bernard. Quetrieme campagne de foulles Ai-Khanoum (Bactriane). Comptes redus de Iacademie des Belles-Letre, 1969, *էջ 337, հտ., Fig. 29, 30.*

[3] Г. А. Пугаченкова. Новые данные о художественной культуре Бактрии. Из истории античной культуры Узбекистана. Ташкент, 1973, с. 94–95; она же. Фрагменты эллинистической архитектуры набережного Тохаристана. Термезская археологическая экспедиция, т. II.– Труды АН УзССР, сер. I. История археологии. Ташкент, 1945, с. 78, рис. 12.

*մում, կրաշաղախից պատրաստված, ուղղահայաց ևս ունի մի անցք: Մյուսը պատրաստված է արևելյան կողմում (աղ. II, 1):*

*Ջրբաժանի բարձրությունը որոշելու նպատակով, հյուսիսային կողմից խորացվեց: Պարզվեց, որ քարի ներքին եզրից* ռելիեֆ գոտի *է անցնում, ներքևում* ականթի *տերևներով զեղեցիկ բարձրաքանդակ է: Այսինքն, այն տաճարի երկթեք տանիքի գագաթի կենտրոնում դրված ճակտոնազարդի (ակրոտերիի) զարդաքարն է (աղ. III, 2, 3): Կրաքարե քվադրը երկրորդ օգտագործման ժամանակ դրվել է գլխիվայր: Փոքրացնելու համար հղկելիս զարդերը վնասվել են: Պահպանվածները, ակներևաբար, ականթի ճյուղեր են: Երկու ճյուղերի միջև շեղանկյունաձև տերևն է (աղ. III, 2): Կասկածից վեր է, որ այն* Արտաշես Առաջինի *կառուցած Ապոլոնի տաճարի վեմերից է: Մ. թ. I դարում կառուցված հոնիական օրդերով տաճարին պատկանող մանրամասներն այլ են և ավելի շատ: Ուշագրավ նորություն էր հասարակական բաղնիքի 8-րդ սենյակի հարավ-արևելք ուղղությամբ ներքև թեքված, ամբողջական քարից պատրաստված ուղղահայաց եզրերով ջրահեռացման առվակը: Վերջինս վկայում է, որ* խճանկարով *հատակի* հարավային կողմում *ջրահեռացման ձագարաձև անցք է եղել (աղ. II, 1):*

*Պեղավայրում 2010 թ. հայտնաբերվել էր մարմարե նման ևս մի առվակ, որը չափերով նույնն է: Կասկածից վեր է, որ այն եղել է վերոհիշյալ առվակի շարունակությունը: Առանց խճանկարը վտանգելու, դժվար կլինի ճշտել ձագարաձև անցքի տեղը: Նմանատիպը բացված նաև Գառնի ամրոցի պալատական բաղնիքի հյուսիսարևելյան կողմում գտնվող նախասենյակի խճանկար հատակի հարավարևելյան մասում: Նախորդ դարավերջին բաղնիքում կատարված ստուգողական աշխատանքների շնորհիվ պարզվել է, որ խճանկարով նախասենյակն ունեցել է հիպոկաուստի սյուներով հատակ: Կիսակլոր խորշը (աբսիդը) լցված է եղել ջրով՝ լողանալուց հետո ցայվելու համար: Ջուրը հեռացել է աբսիդի հատակի տակի կավե քառանկյուն խողովակաշարով*[4]*:*

*Հասարակական բաղնիքը կառուցելուց հետո, վերոհիշյալ երկու սենյականոց բաղնիքի մեծ սենյակի կրակարանը փակվել է (աղ. I, 3) և հարավարևելյան պատի անկյունում բացվել նոր կրակարան: Ըստ երևույթին, դրա գործառնական նշանակությունը փոխվել է, շինությունը ծառայել է ֆիզիկական մարզանքների համար: Առվի արևմտյան կողմում բացվել է ուղղահայաց կանգնած մի կրաքար (լայն. 42 x 60 սմ), որը կենտրոնում գլանաձև անցք ունի (տրամ. 16 սմ): Այս քարի հյուսիսային կողմում գոգավոր խորությունով (տրամ. 43 սմ) լվացարանն է (աղ. I, 5): Կենտրոնում ջուրը դատարկելու անցքն է (տրամ. 7 սմ), վերջինս փակվել է շրջանաձև կրաքարե խցանով: Կողքին բացված կրաքարե քառանկյուն, եզրին ելուստով սալը, եղել է լվացարանի հենակներից մեկը (աղ. I, 6): Այս նորահայտ սենյակներից հյուսիս-արևելք բացվել են նաև հարավ գնացող պատեր՝ մեկ կամ երկշարք քարերով (լայն. 90–100 սմ): Փոքրի հյուսիս-արևելյան կողմում, հարավային պատից 1 մ հեռավորությամբ գտնվող*

[4] *Ժ. Խաչատրյան. Դարձյալ Գառնի ամրոցի բաղնիքի մասին.– Հանրապետական գիտական նստաշրջան: Հին Հայաստանի մշակույթը. XII, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2002, էջ 44–48:*

*մեծ սենյակի հարավային հատվածում, կավե տոփանված հատակի մեջ գտնվեցին մեծ քանակությամբ կրաքարի բեկորներ: Մի մասը ուլունքաշարերի կամ տերևների քանդակազարդերով են՝ վերջինների մեջ վարդագույն ներկերով պատած բեկորներ: Սենյակի արևելյան կողմը տակավին երեք մետրանոց հողի ծածկույթի տակ է: Հնարավոր է այդ մասում ևս ի հայտ գան քանդակազարդ նոր բեկորներ: Մեծ սենյակի հարավային կողմում նկատելի են ավելի բարձր պահպանված որմեր, որոնք հնարավոր է, որ լինեն համակառույցի շարունակությունը:*

*Մեծ սենյակի արևմտյան կողմին հարող հյուսիս-հարավ ուղղության լայն (1.40 մ) պատի հողի շաղախի մեջ հայտնաբերվեց մեծ քանակությամբ (մոտ 40 հ.) կրաքարե տարբեր քանդակազարդ բեկորներ, որոնց մի մասը ներկված է վարդագույն ներկով: Վերջիններս հար և նման են փոքր սենյակի հյուսիսարևելյան կողմում բացված հարավ-հյուսիս առանցքով սենյակներից երկրորդի տոփանված հատակի զանգվածի միջից հայտնաբերված քանդակազարդ բեկորներով քարերին (աղ. II, 3, 4):*

*Հասարակական բաղնիքի III, IX սենյակների և վերոհիշյալ հիպոկառուստով երկու սենյակի արևելյան և հարավային կողմում բացվել են 90 սմ – 1 մ լայնության 40–80 սմ բարձրության պատերով սենյակներ (աղ. I, 1): Այդ սենյակների որմերը շարունակվում են դեպի արևելք և հարավ, որտեղից հայտնաբերված նյութերը հիմնականում ուշ միջնադարյան են: Անտիկ ժամանակաշրջանի գտածոները I–II դդ. կարմիր փայլեցրած սկուտեղների և պնակների բեկորներն ի հայտ են գալիս վաղ միջնադարյան շրջանի հատակների տակից:*

*Բաղնիքի VIII–IX սենյակների արևելյան կողմում ժամանակակից հողի լիցքից 1,5 մ խորությունում հայտնաբերվել է կրաքարե թեք ատամնաշարով (սուխարիկներ) բեկոր: Կասկածից վեր է, որ այն պատկանում է տաճարի ճակատի (ֆրոնտոն) առջևի արևելյան կողմի սյունաշարի եռանկյունաձև ավարտ ունեցող քիվին:*

*Արևելյան կողմում՝ աստիճաններից հյուսիս ընկած հողի մակերևույթից մեկ մետր խորությունից, հայտնաբերվել է նաև կրաքարե քանդակազարդ հորիզոնական բեկոր (երկ. 61 սմ, բարձր. 30 սմ.): Վերին մասում պահպանվել է աղեղնաձև ռելիեֆ՝ երեք զարդ և ոլորուն զարդի մի մաս: Այն նման է խոյակի միջին հատվածին (առանց աչքի): Այնուհետև հորիզոնական ռելիեֆ գոտի է անցնում, որի ներքևում օվնաներով երեք ուռուցիկ զարդ է: Վերջիններս իրարից անջատված են եռանկյունաձև սուր ծայրով ռելիեֆ զարդերով, որոնց ներքևով անցնում է ևս ռելիեֆ գոտի (աղ. III, 5): Ակներևաբար, այն արխիտրավի վրայով անցնող զարդ է, ինչպես Թերմեսի (Փոքր Ասիա, Պանֆիլիա) անտիկ տաճարի վերնամասում է*[5] *(աղ. IV, 1):*

*VII սենյակի պատի հարևանությամբ ի հայտ է եկել պղնձե լավ վիճակում պահպանված, իրար կպած երկու դրամ*[6]*, որոնցից մեկի երկու երեսին*

---

[5] *Ա. Սահինյան. Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երևան, 1983, նկ. 54,* Всеобщая история архитектуры, т. II. Архитектура рабовладельческого общества, кн. первая, 4. Карта Малая Азия, Панфилия. М., 1949, 4. с. 343.

[6] *Դրամները որոշել է դրամագետ Արմինե Զոհրաբյանը:*

*պահպանվել է նուրբ գործվածքի, հնարավոր է բամբակից կամ մետաքսից պատրաստված, ակներևաբար քսակի մնացորդները (աղ. IV, 2): Պարզվել է, որ դրանք Սասանյան դրամներ են և պատկանում են Շապուհ I (242–272 թթ.) (աղ. IV, 3, 4): Արտաշատի պեղումներից հայտնաբերվել է Շապուհ I ևս մի դրամ[7]: Այդ դրամները լայնորեն տարածված են արևելյան երկրներում, նաև՝ Հայաստանում[8]: Դրամի դիմերեսին Շապուհ I կիսանդրին է՝ դեպի աջ եռատամ թագով, վրան եռակետերով զարդարված գնդով (երկրագունդ): Պատկերի շուրջ պահլավերեն գրված է՝ «Մազդային երկրպագող, տիրակալ, Շապուհ, արքայից արքա Իրանի, աստվածներից սերող»: Դարձերեսին՝ կենտրոնում, պատկերված է ատրուշան, որը բաղկացած է կրակարանից՝ բարձր սյունից և հիմքից: Մի կողմում կանգնած է Շապուհ I, մյուսում՝ Ահուրամազդան (աղ. IV, 4): Երկու կողմից գրություն է՝ « Շապուհի կրակը» : Վաղ սասանյան դրամները սկզբնական շրջանում, սակայն, դեռևս լայն ճանաչում չունեին, քանի դեռ շրջանառության մեջ էին նաև հռոմեական դրամները՝ դենարները[9]:*

*Նույն սենյակի հատակի վրայի խառը շերտից հայտնաբերվել է նաև կարծր քարից կերտված ձիու (երկ. 3.3 սմ, բարձ. 1.3 սմ, լայն. 3 մմ) տափակ արձանիկ՝ ոտքերը շեշտող անցքերով: Այն, հավանաբար, եղել է թալիսման (աղ. IV, 5–7):*

*Հասարակական բաղնիքի հանդերձարանի (V սենյակ, 7,7 x 3,7 մ) արտաքին մուտքի (աղ. V, 1) բացվածքը հարավային մասում է: Արևմտյան պատին բացվել է չորս փոքր լուսամուտ՝ (լայն. 12 սմ, բարձր. 21 սմ)՝ երկուսը խորշերի մեջ: Ներքուստ հարավային պատին պահպանված առաջին սվաղի վրա, խազելու եղանակով[10], նկարազարդել են: Նկարներն սկսվում են հատակից 25 սմ բարձրությունից (աղ. V, 3): Դրանք ծաղկել են ինչ-որ սուր, ակներևաբար, երկաթե գործիքով: Երկրորդ սվաղի ժամանակ, առաջին սվաղի մակերեսին, մուրճի ծայրով հարվածելու եղանակով փոսիկներ են արվել նոր սվաղը կպչելու համար: Մուտքի աջակողմյան (արևմտյան) պատի պաննոյի պահպանված մակերեսի բարձր. 130 սմ, լայն. 106 սմ է, իսկ որմնամույթինը՝ բարձր. 165 սմ, լայն. 91 սմ է (աղ. V, 4, VI, VII): Մուտքի արևելյան պատին պահպանված է մի փոքր հատված (բարձր. 60 սմ, լայն. 50 սմ): Մուտքի բացվածքի ձախ կողմում պահպանվել են իրարահաջորդ երեք աղեղներ, ներքևում՝ չորս երկշար քառակուսիներով ցանց: Նետաձիգները չեն նշմարվում: Վերին մասում պահպանվել է հեծյալների վերջին կեսը:*

---

[7] E d. K h u r s h u d i a n, A. Z o h r a b i a n. Sassanian Coins of Armenia. Almaty-2002, P(170) p. 43, № 25.

[8] *Նույն տեղում, էջ 42–43,* pl. III-IV, *Ա. Զ ո հ ր ա բ յ ա ն. Հայաստանի դրամական տնտեսությունը III–X դարերում (սասանյան և արաբական ժամանակաշրջաններ). Մեղմագիր, Երևան, 2004, էջ 7–8:*

[9] *Խ. Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ. թ. V – մ. թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 110:*

[10] *Ազատ, անկաշկանդ խազել կամ փորագրել պատերին, ժայռերին, միջազգային հաղորդակցության վայրերում, անոթների և խեցեղեն բեկորների վրա, որոնք պարունակում են տարբեր տեղեկություններ հանապազօրյա կյանքի, առօրյայի, տնտեսության և այլնի մասին, կարող են լինել Աստծուն նվիրված հմայական, մոգական անհասկանալի բառեր և այլն* (Словарь античности. М., 1989, с. 156).

*Ժողովրդական ստեղծագործության այս եղանակը (գրաֆիտ) վաղուց էր ծանոթ հին աշխարհին: Մեծ քանակությամբ գրաֆիտ է հայտնաբերվել հունահռոմեական հուշարձաններից, Պոմպեյում և Հերկուլանումում[11] հյուսիսմերձսնծովյան հունական քաղաքներում[12], սկյութական Նեռպոլում[13] և այլուր: Հայկական լեռնաշխարհում գրաֆիտը կիրառվել V–IV հազարամյակից (ժայռապատկերներ և այլն), ու հարատևել է մինչև մեր օրերը: Հելլենիստական և ուշ անտիկ շրջանում այն ավելի լայնորեն է օգտագործվել:*

*Հունարեն արձանագրություններ են գտնվել Արմավիրից (մ. թ. ա. II դ.), Գառնիից (մ. թ. I դ.), Ապարանից (մ. թ. III դ), Տիգրանակերտից (մ. թ. IV դ.) և այլ հնավայրերից: Հայաստանի Հանրապետության տարբեր շրջաններից մեզ են հասել Արտաշես Առաջինի թողած արամեերեն արձանագրություններով սահմանաքարեր (մ. թ. ա. II դ.): Արտաշատի VIII բլրի սենյակների պատերի սվաղների մակերեսին բառեր ի հայտ են եկել խազելու միջոցով՝ գրված հունարեն, լատիներեն, արամեերեն (մ. թ. I–II դդ.): Նման եղանակով արձանագրություն է թողնվել Արտաշատի լազուրիտե ափսեի, Սիսիանի արծաթե սկահակի պսակների ներքևում: Արմավիրում, Արտաշատում և Գառնիում հայտնաբերված մ. թ. ա. III – մ. թ. I դարերի խեցեղեն անոթների ու կավե արձանիկների մակերեսին գրված են հունարեն և լատիներեն բառեր, գրեր:*

*Հասարակական բաղնիքի հանդերձարանի պատկերաշարում, մուտքի ձախակողմյան պաննոյում, նկարված են կանգնած և հեծյալ տղամարդիկ: Պատկերները բազմապլան են: Պահպանվածության խաթարված վիճակը հաճախ դժվարացնում է ճիշտ ընկալել նկարը: Դրանք արված են ազատ, անկաշկանդ ոճով, տարբեր մարդկանց կողմից: Խախտված են չափերն ու համաչափությունները: Մի դեպքում մեծ են, մյուս դեպքում՝ բավական փոքր: Երբեմն անփույթ են կատարված, նկարն անավարտ է (թերևս, չի պահպանվել) կամ մանրամասները չեն տրված: Երբեմն էլ արտահայտիչ են, ներկայացված համեմատաբար մանրամասն: Մարդիկ պատկերված են դիմահայաց (ֆաս)՝ լայն բացած ոտքերով (աղ. V, 2, VI): Իրանը նեղ մեջքից դեպի ուսերը հասնում է մինչև ծնկները: Ոտքերը գրկած վարտիքը (տաբատ) իջնում է մինչև ոտնաթաթը: Խիտոնը և տաբատը հարդարված են շեղանկյուններով: Նույն զարդարանքը նկատելի է նաև V, 2 նկարի տղամարդու տարազի պատկերում: Այդօրինակ զարդերով տաբատներ են հայտնի Ամուդարիայի գանձի առարկաների պատկերներում[14]:*

*Թիվ 9 և 13 նկարի մարդկանց կոշիկները՝ պահպանված կապերից կարելի է ենթադրել, որ կաշվե տրեխներ են: Բոլոր տղամարդկանց մեջքի գոտուց սրեր են կախված (աջից ձախ)՝ ձախ ձեռքը կոթառին պահած:*

---

[11] *Նույն տեղում:*

[12] И. И. Толстой. Греческие граффити древних городов Северного Причерноморья. М.–Л., 1959.

[13] О. Д. Дашевская. Граффити на стенах здания в Неополе Скифском.– «Советская Археология», 1962, №I, с. 176–194.

[14] М. В. Горелик. К этнической идентификации персонажей, изображенных на предметах Амударьинского клада.– Художественные памятники и проблемы культуры Востока. Сб. статей. Л., 1985, с. 36–45. таб. IV, 2, V, 4.

*Ուշագրավ է կանգնած մարդկանց գլուխների հարդարանքը, որոնք մեծ բազմազանություն են դրսևորում: Պահպանված՝ կա մի մարդու գլուխ բարձր կոնաձև գդակով, որի կենտրոնով ուղղահայաց գիծ է գնում: Մարդկանց փարթամ գիսակները հավաքված են գլխավերևում: Ունեն ուղիղ և թեք սանրվածք: Մազերը, երբեմն արված են կետերով (խոպոպներով): Ի դեպ, Շոշի (Սուզայի) պատկերներից մեկում, գահին նստած Արտաբան V իշխանության խորհրդանիշ օղը երկարել է Շոշի Սատրապ Կվասակին (մ. թ. 215 թ.), որի գլխի հարդարանքը տրված է նման կետերով[15]: Արտաշատ հնավայրից հայտնի մարդկանց փարթամ վարսերի համեմատ, դեմքերը շատ փոքր են (աղ. VI, 27, 28): Դուրա-Եվրոպոսից գտնված բարձրաքանդակի պարթևական աստծո տարազի խիտոնի բացվածքից երևացող շեղանկյունաձև զարդերով պատմուճանը և մազերի սանրվածքը նույնպես աղերսվում են Արտաշատի գրաֆիտ պատկերների հետ[16]: Իրենց լայն բացած ոտքերով, եռանկյունաձև ներքնամասով ուշագրավ են Սուրխ-Կոտալի տղամարդկանց արձանները (II դ.), որոնց ուռուցիկ վարտիքը կոճկված է ոտնաթաթի մոտ[17], տարբերվում են Արտաշատի տղամարդկանց գրաֆիտի տաբատներից:*

*Հաթրա հնավայրում հայտնաբերված արքայի քանդակում (մ. թ. ա. II դ., պահվում է Մոսուլի թանգարանում) շքեղ խիտոնի բացվածքից երևացող կարճ պատմուճանը հարդարված է շեղանկյունաձև զարդերով լայն տաբատն ունի մինչև ոտնաթաթն իջնող հորիզոնական ծալքեր, կոշիկը փափուկ կաշվից[18]: Աշուրից գտնված, զոհասեղանի մոտ կանգնած, զոհաբերություն կատարող քրմի ճակատային պատկերի բարակ մեջքից դեպի ուսերը և մինչև ծնկներն իջնող եռանկյունաձև լայնացող հարդարանքը նման են Արտաշատի պատկերներին. տաբատը տարբերվում է[19]: Նման լայն, սակայն ուղղահայաց ծալքերով տաբատ ունի Բիսութունի ժայռին, զոհասեղանի կողքին, ճակատային դիրքով պատկերված, զոհաբերություն կատարող պարթև թագաժառանգը (մ. թ. ա. III–II դդ.)[20]:*

*Գրավոր աղբյուրները հայկական տարազին անդրադառնալով, նշում են, որ այն երկար, մինչև ոտնաթաթը հասնող, կրծքի ներքևի մասով գոտեվորող պատմուճան է[21]: Երկար ու կարճ տարազը Հին արևելքում վաղուց էր հայտնի[22]: Նման հագուստ ենք տեսնում նաև ուրարտական տա-*

---

[15] R. G h i r s h m a n. Iran Parthians and Sassanians. Translated by Stuart Gilbert and Fames Emmons. Thames and Hudson. 1962, fig. 70 *(պահվում l Թեհրանի թանգարանում);* Д. Ш л ю м б е р ж е. Эллинизированный Восток. М., 1985, рис. 131.

[16] М. И. Р о с т о в ц е в. Караванные города. СПб., 2010, рис. XXXI *(պահվում է Լուվրում. Փարիզ):*

[17] Д. Ш л ю м б е р ж е. *Նշվ. աշխ., էջ 63–65, նկ. 56:*

[18] R. G h i r s h m a n. *Նշվ. աշխ., նկ. 100:*

[19] *Նույն տեղում, նկ. 60:*

[20] *Նույն տեղում, նկ. 66:* Г. А. К о ш е л е н к о. Культура Парфии. М., 1966, с. 39.

[21] С т р а б о н. География в 17 книгах, XI, III, 3, XI, XIV, 9. Л., 1969, XIII, 34; Л у к и а н. Избранная проза. Александр, или Лжепророк, 27. М., 1991, с. 237.

[22] История древнего Востока. Зарождение древнейших классовых общин и первые очаги рабовладельческой цивилизации , ч. II. М., 1988, рис. 16, 17, 39, 40, 91в, 98 а, б; В. В. Г. А р д з и н б а. Ритуалы и мифы древней Анатолии. М., 1982, рис. 5–7, 10.

*բազում. Էրեբունիի Խալդիի տաճարի որմնանկարներում ոգիները երկար բաճկոններով են*[23]*:*

*Երկար, մինչև կրունկները հասնող թիկնոցները և մինչև ծնկներն իջնող շապիկները կային նաև Աքեմենյան շրջանում*[24]*, տարբեր ժողովուրդների տարազում*[25]*: Պերսեպոլիսի բարձրաքանդակներում, հարկատու ժողովուրդների քանդակում արմենները ներկայացված են մինչև ծնկները հասնող պատմուճանով և կրունկներին հասնող նեղ տաբատով*[26]*:*

*Տվյալ դեպքում մեզ համար կարևորը Էրեբունիից հայտնաբերված հեծյալով* (протома) *արծաթե եղջերազավաթը (մ. թ. ա. IV դարի առաջին կես)*[27]*: Հեծյալի մինչև ծնկները հասնող շքեղ խիտոնը, մինչև կրունկն իջնող անդրավարտիքը հարդարված է Արտաշատի գրաֆիտի տղամարդկանց տաբատի նման շեղանկյունաձև զարդերով: Երկար թիկնոցները, մինչև ծնկներն հասնող շապիկներն ու նեղ տաբատներն աղերսվում են Արտաշատից և Հայաստանի այլ վայրերից հայտնաբերված կանգնած ու հեծյալ Միհրին և զինվորին պատկերող կավե արձանիկների տարազի հետ (I–II դդ)*[28]*:*

---

[23] *Ս. Ա. Եսայան, Ս. Գ. Հմայակյան. Ուրարտական զգեստը.– ՊԲՀ,* А. Маркарян. Еще раз о серебряных ритонах из Эребуни и некоторых проблемах Ахеменидского и раннеэллинистического искусства.– ИФЖ, 2011, № 2, с. 227–243 *էջ 206, աղ. I, էջ 2, 3, 5, 206. 208.* III 2, *4, 6 և այլուր,* Б. Б. Пиотровский. Искусство Урарту VIII–VI вв. до н. э. Л., 1962, рис. 7, 8. 10. 44, 46–50.

[24] Antike Gemmen in Deutschen Sammlungen. Band I. Staatliche Münzsammlung München-Prestel-Verlag München, 1968, Fig 251, 276, 279, 281, 294, *բոլորն էլ մ. թ. ա. Ե. դ.,* Н. М. Никулина. К вопросу о «Восточногреческом» и «греко-персидском» искусстве (по материалам глиптики V–IV вв. до н.э.– ВДИ, 1969, № 3, с. 106–120, табл. I, 27, II, 6, 7, 9, III, 3.)

[25] М. В. Горелик. *Նշվ. աշխ.,* с. 36–46, табл. I–VI.

[26] Erich F. Schmidt. Persepolis I. Chicago. Illinois. Pl. 29B. № 3 (The Armenians?))

[27] Ж. Хачатрян, А. Маргарян. Эребунийский ритон со всадником.– *Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2002, -3, էջ 3–12, նկ. 1, 2,* Ж. Хачатрян, А. Маргарян. Ритон с протомой в виде всадника.– ВДИ, 2003, № 4, с. 114–122, рис. 1, 2; Ž. Hačatrian, A. Z. Markarian. I Rhytadi Erebuni nel contesto dell´ arte. Achemenide e Greco-Persiana. Parthica. Incontri di culture nel mondo antico Pisa. Roma, 2003, № 5, p. 9–20, Fig. 1, 2. *Ֆ. Տեր-Մարտիրոսով* «Портрет Оронта и вопрос «контактного стиля» (*ՊԲՀ, 2010,* № *2, էջ 202–222), հոդվածում արտահայտված տեսակետները մեզ ընդունելի չեն: Ուզում ենք միայն նշել, որ մեր հոդվածում* (Jaures Khachatrian. L´Armènie sous le regne des Orontides (VI–III-av-j.). Au Pied du mont Ararat Splendeurs de l´Arménie Antique. 2007. Editions du Musée de l´Arles de la Provence antiques. 2007, p. 151–157) *եղջերազավաթի* (*ռիտոն*) *մասին ոչ մի խոսք չկա և նույնիսկ դրան վերաբերող բացատրության մեջ վերոհիշյալ հոդվածներն անգամ չեն հիշատակված: Մենք կատալոգի կազմմանը չենք մասնակցել: Կատալոգ կազմողներն այն վերցրել են Բ. Ն. Առաքելյանի,* «Клад серебряных изделий из Эребуни» («Советская Археология», М., 1971, № *1, 143–158), հոդվածից: Ըստ որում, Առաքելյանն այն թվագրում է մ. թ. ա. V, (էջ 147), թե ինչո՞ւ է վերոհիշյալ կատալոգում այն թվագրվում մ. թ. ա. VI–V դդ., տեղյակ չենք, և մենք մեր թվագրությունը (մ. թ. ա. IV դ. առաջին կես) չենք փոխել:*

[28] *Ժ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, -5, Տախտ. IV. 3–5. V. I. VI, 1, 3. Նույնի՝* Об античной коропластике Армении.– ВДИ, 1979, табл. IV 1, 2, V, 1 рис. 10, 12. *նույնի՝ Արտաշատ, II, Անտիկ դամբարանադաշտեր (1971–1977 թթ. պեղումները).– «Հնագիտական պեղումներ Հայաստանում», -17, Երևան, 1981, աղ. XXVI. 1–4, XXVII. 2. 5:*

*Այսպիսով, հայկական հելլենիստական և ուշ անտիկ դարաշրջանի տարազի համադրումը հարևան երկրների, մասնավորապես, իրանական՝ աքեմենյան և պարթևական, տարազների հետ պարզում է, որ թեև առկա են ընդհանրություններ, սակայն կան նաև տարբերություններ[29]: Նմանությունները բացատրելի են. Հայաստանը երկար ժամանակ Աքեմենյան տերության կազմում էր: Արտաշիսյան հարստության անկումից հետո հայկական գահին բազմեց Պարթևստանի թագավոր Վաղարշ I (51–75 թթ.) եղբայրը՝ Տրդատը (63–88 թթ.): Բնականաբար, երկու հարևան երկրների միջև եղած սերտ աղերսները չէին կարող չազդել հայերի, առաջին հերթին վերնախավի վրա: Այդ առթիվ Գայոս Կորնելիոս Տակիտոսն ասում է, որ « հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով» [30]: Ըստ Ստրաբոնի[31] և Լուկիանոսի[32]՝ հայերի զգեստը պատմությանը հասնում էր մինչև կրունկը: Տաբատը նեղ էր, կպած ամբողջ ոտքին33: Ոտքին ոչ թե կիսակոշիկ է, այլ կապերից երևում է, որ տրեխ է (աղ. VI, 25):*

*Արտաշատի պեղումներով ի հայտ եկած մարդկային որոշ կերպարներից միայն գլուխն է պահպանվել, երբեմն էլ գլուխն ու երկար վիզը, իրանը շատ անկանոն և անփույթ է տրված, մինչև ոտքերը չի հասնում:*

*Արտաշատի գրաֆիտում հեծյալները և առանձին նժույգները ներկայացված են ընդհանուր գծերով, սակայն դինամիկ, շարժման վիճակում: Հեծյալի իրանը և գլուխը տրված են ճակատային (ֆաս): Հաճախ բացակայում են հեծյալի գիսակները, երբեմն նույնիսկ դեմքի մանրամասները: Նժույգները պատկերված են պրոֆիլ, սլացիկ, քառատրոփ արշավի, թռիչքի դիրքով («flying gallop» [34]1,4,,8,18,21): Առջևի և հետևի ոտքերը խիստ ձգված են և գտնվում են գրեթե մի հորիզոնականի վրա[35]: Նժույգների ազատ թողնված փարթամ ագին նույնպես գրեթե հորիզոնական է: Իրենց հորինվածքով դրանք հար և նման են Արտաշատի Միհրին պատկերող հեծյալների կավե արձանիկներին: Այստեղ նույնպես հեծյալները պատկերված են ճակատային (ֆաս), մի խմբում նժույգները «քառատրոփ արշավի» դիրքով են, որի վկայությունն է հեծյալի ծածանվող թիկնոցը[36], մյուս խմբում ձին կանգնած է կենաց ծառի կամ զոհասեղանի առաջ, ձախ*

---

[29] *Հ. Վ ա ր դ ա ն, Վ. Հ ա ց ո ւ ն ի. Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, Ս. Ղազար. 1923, էջ 81, նկ. 35. 36. 38, 40, Գ. Ա. Տ ի ր ա ց յ ա ն. Դիտողություններ հելլենիստական դարաշրջանի հայկական տարազի մասին.– ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1959, - 11–12, էջ 97–101:*

[30] *Օտար աղբյուրները հայերի մասին. Լատինական աղբյուրներ, քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյան, Կ. Տակիտոս, Երևան, 1941, էջ 73:*

[31] *S t r a b o, XI, XIV, 12.*

[32] Л у к и а н. Указ. раб.

[33] Ж. Х а ч а т р я н. Отражение Ахеменидских традиций в эллинистическом и позднеантичном периодах.– Научные труды, вып. III, Гюмри, 2000, с. 37–45, табл. $I_{1-4}$, 4. $II_{1-3,5}$, $III_{1,4}$, $IV_{1-2}$.

[34] R. G h i r s h m a n. *Նշվ. աշխ., էջ 48–49,* А. П. Ч у б о в а, А. П. И в а н о в а. Античная живопись. М., 1966, с. *146:*

[35] R. G h i r s h m a n. *Նշվ. աշխ., էջ 62:*

[36] *Ժ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, էջ 50, տախտ. IV, 1–4. V,* Ж. Д. Х а ч а т р я н. Об античной коропластике Армении, 96–97, рис. 8, 9. IV*, 1,2; Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ II, 1981, էջ 180, 181, աղ. XXV, 1, 4;* J. K h a c h a t r i a n. Arménie. Tresor de l´ Arménie ancienne des origines au IV siecle. Paris. 1996, fig. 247, 248.

*ոտքը բարձրացրած, որը խորհրդանշական է և պաշտամունքային նշանակություն ունի (մ. թ. ա. II–I դդ.)[37]:*

*Հեծյալներին ճակատային, ձիերին՝ պրոֆիլ, սլացիկ, քառատրոփ արշավի դիրքով պատկերելը բնորոշ էր պարթև հեծյալներին: Վերջիններս այդ ոճը ժառանգել են Աքեմենյաններից, և որը հետո անցել է Սասանյաններին[38]: Քննությունը ցույց է տալիս, որ պատկերելու այդ եղանակը տարածված է եղել պարթևական մշակութային արեալի մեջ մտնող երկրներում, Հաթրայում, մասամբ Դուրա-Եվրոպոսում, Հայաստանում և այլուր[39]:*

*Արտաշատի գտածոներում ուշագրավ է լավ պահպանված առանձին պատկերված ձիերից մեկը: Հավանաբար, հեծյալը չի պահպանվել: Այն մյուսներից տարբերվում է ավելի մանրամասն մշակումով: Նժույգը քառատրոփ վազքի վիճակում է: Գեղեցիկ հարդարված թամբի առջևի ու հետևի մասում ուղղահայաց նեղ նկարներն են, հավանաբար, կապարճներ: Հար և նման կապարճ առկա է Արտաշատից հայտնաբերված, նապաստակի որսի տեսարան պատկերող, հեծյալի կավե արձանիկի վրա[40]: Կապարճ է պատկերված նաև Դուրա-Եվրոպոսից գտնված վայրի ավանակների (onager, ցիռերի) որսի տեսարանում, հեծյալի թամբի հետևում, սակայն այն տարբերությամբ, որ վերջինս շատ ավելի մանրամասն մշակում ունի: Տրված են ոչ միայն հեծյալի նետահարելու պատրաստված նետն ու աղեղը, այլև կապարճի միջի նետերը (II դ.)[41]:*

*Արտաշատի գրաֆիտում նժույգի բաշը ցանցաձև է: Նկատելի է սանձը, նժույգի գլխին շրջանակի մեջ վերցված ծառ (կենաց ծառ) է պատկերված: Դրանով շեշտված է նրա արքայական նժույգ լինելը: Նժույգի գլխի զարդը բնորոշ է Սասանյան ժամանակաշրջանին: Այն կարելի է տեսնել արքայական որսի տեսարանով արծաթյա թասերի վրա, հանդիպում է նաև Հաթրայի և Դուրա-Եվրոպոսի գրաֆիտներում: Պերսեպոլսի գրաֆիտում (մ. թ. III դ. սկիզբ) Սասանյանների արքայատան առաջին ներկայացուցիչներից Պապակը Արտաշիր Առաջինի որդին, երկար թիկնոցով, լայն վարտիքով, կիսակլոր սաղավարտին, շրջանակի մեջ վերցված, ութ ճյուղերով ծառ է պատկերված[42]:*

*Արդ, ինչե՞ր են պատկերված Արտաշատի գրաֆիտներում: Արդյոք դրանք թեմատիկորեն իրար հետ կապված հորինվածք են, թե՞ պարզապես տարբեր մարդկանց կողմից ազատ կատարված ժողովրդական ստեղծագործության արգասիք:*

---

[37] *Ժ. Խաչատրյան. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, էջ 52, տախտ. VI, 3. Արտաշատ, II, XXVI. 2,3;* Z. D. Khachatrian. Ai Piedi dell'Ararat. Artaxata e I'Armenia EIlenistico-Romana, a cura di Antonio Invernizzi. Torino, 1998, Fig. 94.

[38] Roberta Venco Ricciardi Immagini Graff ite delledificio a di Hatra. Partica. Jncontri di culture nel mondo antico. № 6, 2004, Pisa. Roma. p. 211; К. В. Тревер, В. Г. Луконин. Сасанидское серебро. Собрание Гос. Эрмитажа. Художественная культура Ирана III–VIII веков. М., 1987, с. 54–81, рис. 14–28, 48–64; В. Г. Луконин. Иран в эпоху первых Сасанидов. Л., 1961, с. 55–64, табл. XI–XXI.

[39] В. И. Пругло. Терракотовые статуэтки всадников на Боспоре. «История и культура античного мира». М., 1977, с. 178, кап. 1–4.

[40] J. Khachatrian. Arménie, fig. 248.

[41] R. Ghirshman. *Նշվ. աշխ., նկ. 62:*

[42] Н. К. Дибвойз. Политическая история Парфии. Пер. с англ. СПб., 2008, рис. 68.

*Հելլենիստական ուշ անտիկ դարաշրջանում արքայական որսը շատ տարածված էր: Թագավորներն այդ նպատակով հատուկ անտառներ էին տնկում: Հիշենք, Երվանդաշատի մոտ՝ Արաքսի և Ախուրյանի միախառնման տեղում, ձախ ափին գտնվող «ծննդոց անտառը» . Տիգրանակերտի մերձակայքի պալատն իր այգիներով, լճակներով՝ զբոսանքի և որսի սիրահար թագավորի համար ժամանցի վայր էր, արքայական ամրոց Գառնիից մինչև Արտաշատ Ազատ գետի ափերին տնկված «Խոսրովի անտառը» և այլն: Բնականաբար, արքային փառաբանող որսի տեսարանները չէին կարող արտահայտություն չգտնել պաշտոնական և ժողովրդական արվեստում: Որսում էին ինչպես վայրի գազաններ, այնպես էլ քարայծեր, եղնիկներ, վայրի ձիեր և ջորիներ (onagers, ցիռեր):*

*Հաթրայի որսի տեսարաններում առկա են առյուծներ, վարազներ, քարայծեր, եղնիկներ, խոյեր, ցուլեր, ջորիներ, քարայծերի սրընթաց վազքի վիճակում գտնվող մի ամբողջ երամակ և այլն: Պատկերված է ոչ միայն մարդկանց կողմից կատարվող որսը նետ-աղեղով, այլև ցուլի վրա նետված առյուծը: Դուրա-Եվրոպոսի Միհրի տաճարի որմին պատկերված որսի տեսարանում (III դ.) Միհրը նետահարում է փախչող առյուծին, վարազին, եղջերուներին և մյուս կենդանիներին:*

*Վայրի էշերի որսի վերոհիշյալ գեղեցիկ տեսարանը, որտեղ հեծյալը սրընթաց վիճակում պատրաստվում է նետահարել երկու վայրի ցիռերի, նույնպես հայտնի է Դուրա-Եվրոպոսից (II դ., պահվում է Լուվրում)[43]:*

*Արտաշատի արշավող նժույգները հիմնականում պատկերված են դեպի աջ, կան նաև դեպի ձախ: Ձիերի մի մասի վրա հեծյալները բացահայտ են, դժվար է ասել դրանք նժույգներ են, թե՞ վայրի ջորիներ: Կանգնած մարդկանց բոլորի սրերը պատյաններում են, այսինքն՝ այն պատերազմական տեսարան չէ: [Մարդիկ կանգնած են այնպես, որ ասես շրջափակում են կենդանիներին: Առանձին պատկերներում հեծյալները նետահարելու դիրքով են, իսկ որոշ հեծյալների և կանգնած մարդկանց աջ թևը շատ երկար է ներկայացված, ասես, պարան են նետում դեպի նժույգը (աղ. VII, 12, 16-18, VIII, 3)]: Հանդերձարանի մուտքի բացվածքում մի շարքի վրա երեք գեղեցիկ աղեղ է նկարված, բայց նետահարողները չեն պահպանվել: Նկատվում են միայն նժույգի մի թամբ և առանձին գծեր (աղ. VII): Խնդրո առարկա մեր գրաֆիտում առկա են կողք-կողքի երկու փոքր կենդանիներ, որոնց ագին աղեղնաձև թեքված է դեպի վեր: Դրանք, ակներևաբար, բարակներ են (աղ. VII, 1): Առկա է նաև եռանկյունաձև պատկեր, որը վրան է հիշեցնում (աղ. VI, 20): Նմանօրինակ երկու վրան առկա է Հաթրայի գրաֆիտում[44]:*

*Կարծում ենք, որ Արտաշատի գրաֆիտում ներկայացված է նժույգների կամ ցիռերի որսի տեսարան: Քանի որ հասարակական բաղնիքը կառուցվել է II դարի վերջին III դարի սկզբին, և գրաֆիտն արված է առաջին սվաղի վրա, ուստի այն կարող է պատկանել IV դ. առաջին կեսին, մինչև Շապուհ II կողմից քաղաքի ավերումը (368 թ.):*

---

[43] R. Ghirshman. *Նշվ. աշխ., նկ. 62:*

[44] R. Venco Ricciardi. *Նշվ. աշխ., էջ 206, նկ. 3:*



1

2

3

4

5

6

7

7a

Աղյուսակ I

1

2

3

4

Աղյուսակ II

1

2



3

4



5

Աղյուսակ III




1

2

3

4

5

6

7

Աղյուսակ IV

1



2



3

4

Աղյուսակ V

Գկ.19
Գկ.14
Գկ.13
Գկ.21
Գկ.15
Գկ.11
Գկ.17
Գկ.8
Գկ.9
Գկ.12
Գկ.16
Գկ.10
Գկ.10
Գկ.7
Գկ.6
Գկ.4
Գկ.3
Գկ.5
Գկ.20
Գկ.2
Գկ.1

Աղյուսակ VI

Աղյուսակ VII

## РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК ПОСЛЕДНИХ ЛЕТ СТОЛИЦЫ АРТАШАТ

ЖОРЕС ХАЧАТРЯЎН

Р е з ю м е

Основные раскопки Арташата были сосредоточены в южной стороне общественной бани и сокровищницы, открывшихся на расстоянии 70 м от левого берега реки Аракс. Система водоснабжения состоит из прямоугольного ручейка, трех трубопроводов, наклон которых ведет к капищу большой комнаты с гипокаустом. Трубы присоединены к водоразделу 1–6 отверстиями. Оказалось, что камень водораздела – это лобовой камень с орнаментом храма Аполлона, построенного Арташесом I. Он поставлен вниз головой, во время обработки повредили орнамент верхней ветви гиацинта горизонтального рельефа пояса. Рядом с камнем водораздела сохранился также ручеек восьмой комнаты бани, через который удаляли воду.

Между общественной баней и комнатами с восточной стороны были обнаружены маленькие обломки с орнаментом, часть которых окрашена фиолетовой краской. В восточной части были найдены также бронзовые монеты (2 шт.) Шапуха I (242–272).

На внутренней левой стороне входа общественной бани (5-я комната) и на поверхности штукатурки настенного вещества методом гравировки изображены стоящие мужчины и мужчины на лошадях. Мечи стоящих мужчин находятся в ножнах. Они стоят так, как будто окружают зверей. В отдельных фрагментах всадники находятся в позе стрелка.

На графите Арташата изображена сцена охоты диких скакунов или диких ослов (куланов). Графит относится к первой половине II в., до разрушения города (368 г.) Шапухом II.

## THE RESULTS OF THE RECENT YEARS EXCAVATIONS OF THE CAPITAL ARTASHAT

ZHORES KHACHATRYAN

S u m m a r y

The excavations of Artashat had been carried out mainly on the southern part of the treasure house and public bath-house opened about 70m away from the left bank of the river Arax. The noteworthy system of water supply here consists of a rectangular streamlet, three pipe-lines, which are bent to the hearth of the large room with hippocaust. The pipes joined the watershed with 1–6 holes. The stone of the watershed turned out to be the one of the front part of the temple of Apollo built by Artashes I. It is put upside-down and while making it smaller they have

damaged the engraved patterns of the hyacinth branches on the horizontal relief belt. The drainage of the bath-house eighth room beside the watershed stone had also survived.

Small decorated fragments, a part of which is painted in violet, have been excavated in the eastward rooms between the public bath-house and the above mentioned two rooms. Bronze coins of Shapuh I (242–272) have also been found in the eastern section.

Standing and riding men are depicted on the inner left-side wall by the entrance to the public bath-house. The standing men have their swords in scabbards. They seem to have blockaded the animals, some of the riders are in the pose of archers.

Wild blood-horses or asses hunting scenes are drawn on the graffito of Artashat. The graffito is of the first half of the 2nd century, before the destruction of the city (368) by Shapuh II.